Սուրբ Էջմիածնիս, ի յուղղել և ի կարգաւորել զկարգ և զկրաւնս Հայաստանեայց սուրբ եկեղեցոյ. Եւ այս եղև ի շնորհաց Սուրբ Հոգւոյն և ի խնդրոյ հայկազեան տոհմի, և կամակցութեամբ արևելեան վարդապետացս. Շմաւոն վարդապետէ, Սարգիս վարդապետէ, Դաւիթ վարդապետէ, Դանիէլ վարդապետէ, (և) Ազատորդեացս և համաւրէն ամենայն ազգիս։ Զոր և մեք ի հարկէ ապաւինելով յամենակալ նախախնամութիւնն Արարչին ամենեցուն՝ ի Տէր մեր Յիսուս Քրիստոս, եւ յանձն առաք զայս անտ(ան)ելի հոգաբարձութիւնս սուրբ եկեղեցւոյս Աստուծոյ. և բազում շնորհաբաշխութիւնս ապրարաք ի յայսմ ժամանակիս։ Եւ ընդ սոցին եկն և Խաչատուր վարդապետն ի հնազանդութիւն սուրբ աթոռոյս Էջմիածնիս, և մեք մեծ սիրով և պատուով ընկալաք զդա ըստ տէրունական հրամանին. և երեր առ մեզ զթուղթն ինքնակալ թագաւորին Գաղեմիրին, եւ Լովի տանուտերացդ և զԿամենէցիդ։ Եւ մեք միաբանութեամբ վարդապետացս և եպիսկոպոսացս՝ ձեռնադրեցաք և աւրհնեցաք զդա եպիսկոպոս մայրաքաղաքիդ Իլովի աթոռոյն և իւր ամենայն բոլոր վիճակին, որ են այսոքիկ. Աստուածաշէն մայրաքաղաքդ Իլովն, ի Սեչովն. աստուածազոյգ և գեղեցկայարմար քաղաքսդ, Կամենէցն և յայլ շրջակայսն։ Որ և առաջնորդութեամբ միածնի Որդւոյն Աստուծոյ առաքեցաք առ ձեզ զհաւատարիմ և զսիրելի հոգևոր որդիս մեր զՏէր Խաչատուր եպիսկոպոսդ ձեր առ ձեզ՝ աւրհնութեան նամակաւ և բարձր հրամանաւ և սրբալոյս սուրբ մեռոնաւ, քարոզել և խրատել և ուսուցանել զձեզ՝ գնալ յաւրէնս և ի պատուիրանս Տեառն, (անարատութեամբ) և սրբութեամբ։ Կալցի ն(ա) հրամանաւ մերով ի վերա ձեր առաքելաբար իշխանութիւն կապելոյ և արձակելոյ զմեղուցեալսն և զապաստամբեալսն ի յաւրինացն Աստուծոյ և ի կանոնաց սուրբ եկեղեցոյ, և զանհնազանդսն իրաւամբ խրատել սաստել յանդիմանել և մխիթարել։ Որով և դուք ամենեքեան սիրելի որդիք մեր ի Քրիստոս, զառաքելաշնորհ եպիսկոպոսդ զԽաչատուր վարդապետ՝ մեծաւ սիրով և պատուով յոյժ ընկալարուք զդայ, որպէս զհրեշտակ Աստուծոյ և զառաքեալ Քրիստոսի ի դրանէ սուրբ աթոռոյս առ ձեզ առաքեալ։ Այլ և զամենայն կանոնեալ հասս և զիրաւունս, զոր աւրինաւք և կանոնաւք պարտիք տալ Աստուծոյ բաժին, լի և անթերի առանց խորելոյ տուք ի ձեռս նորընծա տէր Խաչատուր եպիսկոպոսիդ ձերոյ։ Եւ մի՛ ոք իշխեսցէ հակառակիլ դըմա կամ ընդդիմանալ հրամանաց դորա. իսկ որք յանդգնին և հակառակին, ի ներքոյ դատապարտութեան և պատժոյ լիցին։ Իսկ հնազանդեալք դորա և հրամանիս մեր՝ աւրհնեալ լիցին յԱստուծոյ և յամենայն Սրբոց և ի մէնջ։ Ամէն։ Իսկ կապեալք և բանադրեալք ի դմանէ՝ ի նմին մնասցեն, մինչև հնազանդեսցին, և ապա առցեն զարձակումն և զթողութիւն ի Տէր Խաչատրէ եպիսկոպոս վարդապետէ, կամաւ և ոչ ի հարկէ կամ բռնութեամբ։ Վասն որոյ ի մտանելն դորա ի յաւրհնեալ վիճակդ իւր, ինչք և շնորհք ողորմութեանն Աստուծոյ յերկնից ի վերա ձեր եւթնպատիկ, և լցուսցէ զձեզ ամենայն բարութեամբ։ Բարձցէ ի ձէնջ և յաչխարհէդ ձեր՝ զամենայն ցա-